վրա խոտի ճնշումը կրելու և օդափոխությունը դժվարացնելու: Տանիքը ծածկվում է եղեգով, ծղոտով, խոտով: Հարդը հանելու համար մտնում են դռնով, որը լինում է առջևի կամ կողքի պատի մեջ:

Խոտը սովորաբար պահվում է բացօթյա դեզերով, որոնք կիտվում են գոմերից ոչ հեռու, այն էլ ոչ անմիջապես գետնի վրա, այլ տակը ճյուղեր փռելով: Դեզերի կողերի վրա ձգվում են երկար ձողեր, որոնց հանդիպակաց գլուխները իրար հետ կապվում են: Անձրևից և ձյունից պաշտպանելու համար դեզի երեսը ծածկում են տախտակներով կամ ավելի հաճախ ծառերի կեղևներով, որոնք պոկված են լինում հաստ բներից, տափակեցրած և շորացրած[27]:

Սակայն զանգեզուրցին գիտե խոտը զետեղել և հատուկ շենքում՝ խոտանոցում: Կան քարայր խոտանոցներ, օրինակ՝ հին Գորիս գյուղում: Կան և այդ նպատակով կառուցված առանձին շենքեր, որոնց երեք կողմերը քարե պատեր են, իսկ չորրորդ լայն կողմը, բաց է և այդ բացվածքն ամբողջովին կամ կիսով չափ քողարկված է ճյուղերի հյուսվածքով՝ օդափոխության համար:

Այսպիսի շենքեր կառուցվում են նաև ցորենի և գարու խուրձերն անձրևից պաշտպանելու համար: Երեք կողմերից պատ, առջևից բաց ծածկեր, մեծ մասամբ կալի մոտ, այդ պատճառով դրանք Գորիսում կոչվում են կրլապան[28], Կապանում այդ բառին համապատասխանում է տէփ բառը:

Քանի որ անասնապահությունը Զանգեզուրում հանդիսանում է հողամշակության կից գյուղացու հարստության գլխավոր աղբյուրներից մեկը, երբեմն էլ առաջնակարգը, քանի որ այստեղ որպես Հայկական լեռնաշխարհի նաև այլ գավառներում ամառն ընտանիքի անդամներից մի քանիսն, առավելապես կաթնատնտեսության մեջ մեծ վարժություն և փորձառություն ձեռք բերած կանայք, փոխադրվում էին բարձրադիր մարգագետինները, որտեղ անասունն իր համար գտնում է առատ, հյութալի և ճոխ կեր: Սար բարձրացող յուրաքանչյուր ընտանիք հարկադրված է ունենալ բոլոր այն պարագաները, որոնցով նա կարող է ապահովել սարում այդ ամիսներին հարմար ապրելու հնարավորությունը, առաջին հերթին այնտեղ ժամանակավոր բնակարան կառուցելու դյուրությունը: Այդպիսի շարժական բնակարան է վրանը՝ ալաչուխը[29], որտեղ սարվորը կարող է պատսպարվել և՛ գիշերվա ցրտից, և՛ լեռներում հաճախակի անձրևներից ու կարկուտից, տեղ տալով այդ ժամանակ իր կողքին նաև գառներին, ուլիկներին, թույլ հորթուկներին և կարող է պահել իր կաթնատնտեսական պարագաներն ու մթերած յուղը, պանիրը, շորթանը և այլն:

Ադրբեջանցիների համար, որոնց մի մասը նոր է անցնում հողամշակության և որոնց տնտեսության մեջ անասնապահությունը գերադաս տեղ է գրավում նույնիսկ այն տեղերում, երբ հողամշակությունը արդեն կապել է նրանց հողի հետ, ալաչուխը հանդիսանում է բնակարանի ամենակարևոր ձևը և այդ պատճառով նրանք ավելի մեծ խնամքով են կառուցում այդ վրանը, քան թե հայ սարվորները, առավել որ հայ սարվորը իր պատրաստի կաթնամթերքը

---

27 Այդպիսի կեղևով ծածկում են գիշերը կամ ցուրտ եղանակին նաև հացատոնի հուրբը:

28 Կրլապան հայերեն բառ է, որ այլ գավառներում (Կարին-Ախալցխա) գործածական է կալապան կամ աղավաղված՝ կառապան ձևով: Սասունում նույն շենքը կոչվում է կալատուն. (ծան. խմբ.):

29 Տե՛ս Փարսադան Տեր-Մովսիսյան, անդ., էջ 66. Գորիսի շրջանում այս բառը չեն գործածում, այլ պարզորեն ասում են՝ օբա: Մի փոքրաթիվ (հնգի չափ) միասին բինա դրած օբաներին ասում են՝ կամգալ: